ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

# ՈՐՈՇՈՒՄ

№2023-8-2-Ա

ք. Երևան 24.08.2023թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2023 թվականի օգոստոսի 24-ի նիստում քննարկեց 2023 թվականի մարտի 22-ին արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից Զակրիտոյե ակցիոներնոյե օբշչեստվո «Բիզնեստրաստ» ընկերության (600009, g.Vladimir, ul. Polini Osipenko, dom 41, ofis 326, RU) «Владимирский стандарт» (No20212837) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
Հայտում նշված՝ 29-րդ դասի «որսամիս. թռչնամիս. պտղամիս. միս. խոզի միս. աղը դրած միս. խոզապուխտ. երշիկեղեն. արյունախառն երշիկ. խմորապատ նրբերշիկներ փայտիկների վրա (կորնդոգեր). պահածոյացված միս. սառեցումով չորացրած միս. բնական կամ արհեստական թաղանթներ երշիկի համար. բեկոն. աղը դրած միս. նրբերշիկ. նրբերշիկ պաքսիմատի մեջ. նրբերշիկներ հոթ-դոգերի համար. և 35-րդ դասի «վաճառքի օժանդակություն երրորդ անձանց համար՝ ներառյալ խանութների ծառայություններ ու առցանց խանութների ծառայություններ ապրանքների մեծածախ ու մանրածախ վաճառքի համար» ծառայությունների համար հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 111-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի

առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան վերը նշված դասերի ապրանքների և ծառայությունների համար, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս օգտագործվող «ВЛАДИМИРСКИЙ СТАНДАРТ» ապրանքային նշանի նկատմամբ, որի մասին տեղեկատվությունն առկա է http://www.kolbasa-vs.ru/catalog/ ինտերնետային կայքում, և որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Կոլեգիայի անդամը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու, փորձաքննության որոշումը ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան վերը նշված դասերի ապրանքների և ծառայությունների համար, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս օգտագործվող «ВЛАДИМИРСКИЙ СТАНДАРТ» ապրանքային նշանի նկատմամբ, որի մասին տեղեկատվությունն առկա է http://www.kolbasa-vs.ru/catalog/ ինտերնետային կայքում, և որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում մեկ կողմ վեց դեմ ձայների հարաբերակցությամբ.

# Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված Զակրիտոյե ակցիոներնոյե օբշչեստվո «Բիզնեստրաստ» ընկերության «Владимирский стандарт» (No20212837) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել, փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ